

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ФИЗИОЛОГИИ
ВОПРОСЫ ВЫШЕЙ НЕРВНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ
И КОМПЕНСАТОРНЫХ ПРИСПОСОБЛЕНИЙ

Выпуск II

1956 г.

Б. А. АЧИЧИЗИ

ЗАЩИЩЕННЫЕ В АРМЕНИИ
ВОПРОСЫ ВЫШЕЙ НЕРВНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ
И КОМПЕНСАТОРНЫХ ПРИСПОСОБЛЕНИЙ

Наши физиологи впервые в Армении изучили вопрос о компенсаторных механизмах, а также о влиянии различных факторов на высшую нервную деятельность и компенсаторные механизмы. Важнейшие результаты были получены в области изучения высшей нервной деятельности и компенсаторных механизмов.

Физиологи Армии впервые в Армении изучили высшую нервную деятельность и компенсаторные механизмы. Важнейшие результаты были получены в области изучения высшей нервной деятельности и компенсаторных механизмов.

Физиологи Армии впервые в Армении изучили высшую нервную деятельность и компенсаторные механизмы. Важнейшие результаты были получены в области изучения высшей нервной деятельности и компенсаторных механизмов.

Физиологи Армии впервые в Армении изучили высшую нервную деятельность и компенсаторные механизмы. Важнейшие результаты были получены в области изучения высшей нервной деятельности и компенсаторных механизмов.

Физиологи Армии впервые в Армении изучили высшую нервную деятельность и компенсаторные механизмы. Важнейшие результаты были получены в области изучения высшей нервной деятельности и компенсаторных механизмов.

Физиологи Армии впервые в Армении изучили высшую нервную деятельность и компенсаторные механизмы. Важнейшие результаты были получены в области изучения высшей нервной деятельности и компенсаторных механизмов.

ողնուղեղի բարձր կիսահատումներից, մինչև այժմ ուսումնասիրված չէ: Այդ իսկ պատճառով է: Հասրաթյանի առաջարկով մենք ձեռնամուխ ենք եղել այդ հարցի լուծմանը:

Ներկա աշխատանքը նպատակ ունի երկենցաղների դասից գորակրի մոտ ուսումնասիրելու թե ողնուղեղի երկողմանի բարձր կիսահատումից ինչպիսի խանդարումներ են առաջանում և խանդարված ֆունկցիաների վերականգնման պրոցեսում գլխուղեղի որ մասերն են մասնակցություն ունենում:

Մ Ե Թ Ո Գ Ի Կ Ա

Երկենցաղ կենդանիների մոտ խանդարված ֆունկցիաների վերականգնը-ման դինամիկայի ուսումնասիրությունը մեր կողմից կատարվել է քրոնիկ փորձերի օգնությամբ: Փորձերը հիմնականում տարվել են անպոչների կարգին պատկանող երկու տեսակի՝ լճային (Rana ridibunda Pall) և անդրկովկասյան (R. Cameran Baul) գորտերի վրա:

Էքսպերիմենտալ ուսումնասիրությունները կատարվել են ինչպես ձմռան, այնպես էլ ամռան ամիսներին: Երկու գեպքում էլ վիրահատման ենթակա դորտերի ջրի չերմաստիճանը պահպակ է հավասար բարձրության վրա, որի համար 2—3 ժամ առաջ նախքան վիրահատումը փորձարկման ենթակա գորտերի միջավայրի ջրի չերմաստիճանը հասցվել է 10—12°-ի: Այդ անհրաժեշտ է եղել կատարելու այն պատճառով, որ ջրի բարձր չերմաստիճանի դեպքում գորտերի մոտ սաացված տվյալները լինում էին խայտարդետ, երբեմն իրար հակասող, որպիսի հանդամանքը թույլ չէր տալիս հայտնաբերելու որևէ օրինաչափություն փորձերի ընթացքում:

Փորձարկման ենթակա գորտերի մոտ նախքան վիրահատումը ստուգվել են հետևյալ տվյալները:

1. Ռեֆլեկտոր զրգուման շեմքը
2. Գաղանի շրջանի որոշումը (Տյուրկի մեթոդով)
3. Շարժող ներկերի լորոնաբախան
4. Վարքադիմը և աշխուժությունը.

Վիրահատումը կատարելու համար գորտերը քննցվել են էթերային նարկազով, որի համար փորձարկման ենթակա կենդանին դրվել է առակյա զանդի տակ, որտեղ և տեղավորվել է էթերով թրչված բամբակի կտորը:

Կենդանին էթերով քննցնելուց հետո տեղավորվել է վիրահատման տախտակի վրա: Վիրահատվող դաշտը սպիրուի և յոդի թույլ լուծույթներով մշտիելուց հետո կատարվել է վիրահատումը, որի համար օգտագործվել են ակնարուժական գործիքներ (պինցետ, զանակ, մկրատ և այլն): Ողնուղեղի առաջին կիսահատումը կատարվել է անմիջապես երկայնաձիգ ուղեղի տակը, երկրորդ կիսահատումը՝ առաջին կիսահատման հակառակ կողմում, նրանից որքան հնարավոր է ներփե, աշխատելով ընդգրկել նաև հաշորդ առջեկի վերջավորությունը: Համաձայն դրան դիմակրծքի շրջանում մաշկը 3—5 ամ երկարությամբ վիրաբուժական դանակի կամ մկրատի օգնությամբ կտրվել է, ապա բարձրացվել է բամբակյա բարձիկներով, որից հետո փոքր աքցանի կամ սուր զանակի օգնությամբ շարդմել կամ քերվել է ոսկորը մինչև ողնուղեղի երեալը: Ողնուղեղի

կիսահատումները կատարվել են աշբի դանակի կամ ծայրը սրած ասեղի օգնությամբ, ողնուղեղը առանց տեղից բարձրացնելու Դրա համար ասեղը կամ դանակը զգուշությամբ խրվել է ողնուղեղի կենտրոնը, ապա կտրվել նրա համապատասխան կեսը (աչ, ձախ): Վիրահատման ճշտությունը ստուգվելուց հետո նորից փակվել է վերքը, կարվել է մշանային շերտը, ապա մաշկը: Վիրահատված մասը մշակվել է սպիտի և յոդի թուլ լուծույթներով: Հաճախ, վիրահատումից հետո, վերքի վրա լցվել է ստրեպտոցիդի փոշի, կամ պենիցիլինի լուծույթի մի քանի կաթի:

Վիրահատված գորտերի մոտ հետագա ուսումնասիրությունները սկսվել են վիրահատումից մեկ ժամ հետո և ավարտվել խանգարված ֆունկցիաների հնարավոր վերականգնումից հետո, Այստեղ հիմնականում ուսումնասիրվել են նույն երեսույթները, ինչ նշվել է մինչ վիրահատումը: Ստացված տվյալները համեմատության մեջ են դրվել նույն կենդանու նորմալ վիճակից ստացված տվյալների հետ: Խանգարված ֆունկցիաների վերականգնումից հետո հանգել է առաջնային կամ թե միշտն ուղեղը: Այն կատարվել է հետեւյալ կերպ. կենդանին էթերով քննեցնելուց հետո ամրացվել է փորձասեղանին: Գլխի վիրահատվող մասը մշակվելուց (սպիտով և յոդի թուլ լուծույթով) հետո կտրվել է մաշկը, ապա սուր մկրատի օգնությամբ հեռացվել գլխի ոսկորը Ոսկորը հեռացնելուց հետո զանակի բութ ծայրով անշատվել է առաջնային, կամ միշտն ուղեղն ու հեռացվել: Դրանից հետո կարվել է գլխի մաշկը և այն մշակվել սպիտի, ապա յոդի թուլ լուծույթներով: Ողնուղեղի երկկողմանի կիսահատուման են ենթարկվել ընդամենը 200—250 գրամ կշիռու ունեցող 212 գորտ:

ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գորտերի մոտ ողնուղեղի առաջին կիսահատումը կատարվել է երկայնաձիղ ուղեղի անմիջապես տակը, իսկ երկրորդը՝ առաջին կիսահատումից 8—10 մմ ցած:

Մանրազնին ուսումնասիրությունների ընթացքում պարզվում է, որ գորտերի մոտ ողնուղեղի երկկողմանի կիսահատման դեպքում մեծ նշանակություն ունի այն տարածության մեծությունը, որը ընկած է երկու կիսահատումների միջև: Պարզվել է, որ եթե այդ տարածությունը փոքր է լինում 8 մմ-ից, ապա այդպիսի կենդանիները առանց բացառության սատկում են:

Փորձերը ցույց են տվել նաև, որ կենդանիները ողնուղեղի երկկողմանի կիսահատմանն ավելի լավ դիմանում են այն դեպքում, երբ առաջին և երկրորդ շատումները կատարվում են միաժամանակ:

Գորտերի մոտ ողնուղեղի երկկողմանի կիսահատումը առաջ է բերում շարժողական և վեգետատիվ ֆունկցիաների դդալի խանգարումներ:

Շարժողական տիպի խանգարումները առաջին հերթին արտահայտվում են նրանով, որ լորալու, ցատկելու, քայլելու պրոցեսներին առջեկի վերջավորությունները շեն մասնակցում: Նրանք պասսիվ ձևով ծալվում են ծնութի տակը և այդպես մնում որոշ ժամանակ: Պետք է շեշտել, որ առջեկի վերջավորություններից առաջին հատման կողմում գտնվող թաթը լինում է որոշ շափով թուլացած վիճակում, իսկ հակառակ կողմի թաթը լարված և ծալված վիճակում (նկ. 1):

Վիրահատումից 2—3 օր, խսկ երբեմն էլ 3—4 ժամ հետո նկատվում է, որ գորտը ձգտում է ցատկել, կամ քաղլել: Քաղլելու համար վիրահատված գորտը օգտագործում է հասել վերջավորությունները, դռնշը և կրծքի վանզակը:



Նկ. 1

Վիրահատումից մի քանի ժամ հետո գորտերի մոտ նկատվում է ընդհանուր, հատկապես հտին վերջույթների գրգռականության բարձրացում: Բացի այդ նրանք մեխանիկական գրգիռներին պատասխանում են ջղաձիգ կծկումներով: Հետաքրքրական է և այն, որ դրանք ստացած վերջավորության մոտ առաջ է դալիս ծալելու երեսով, խսկ մնացած ութերի մոտ՝ տարածվելու:

Վիրահատված գորտերին մնջքի վրա դնելուց վերջիններս հասել վերջավորությունների օգնությամբ շուր են գալիս փորի վրա: Զրի մեջ դնելոց նրանք երկար ժամանակ կարողանում են անշարժ կանգնել: Լողալու ժամանակ օգտագործում են միայն հտին վերջավորությունները:

Գորտերի մոտ ողնուղեղի երկկողմանի կիսահատումից հետո ուժեղ կերպով խանգարվում են նաև վեգետատիվ ֆունկցիաները, միզելն ու գեֆեկացիան: Այդ ավելի արտահայտիչ ձևով երեսում է վիրահատման հաջորդ օրը: Նկատվում է, որ գորտերը ուղղում են տանշվում են միզափամփուշաթ լցվելուց: Նրանք չեն կարողանում ինքնուրույն կերպով միզել և հարկ էր լինում դիմել կողմնակի միջամտության: Արհեստական միզում առաջացնելուց հետո նրանց մոտ նկատվում է որոշ աշխուժացում:

Ողնուղեղի երկկողմանի կիսահատումից հետո, մինչև 2—3 ժամ գորտերի մոտ նկատվում է ընդհանուր թուկություն: Նրանք մեխանիկական գրգի-

ներին պատասխանում են շատ թույլ, միևնույն ժամանակ սրտի և թոքերի աշխատանքը զգալիորեն թուլանում է:

Խանգարված ֆունկցիաների վերականգնուման առաջին նշանները նկատվում են վիրահատման հաջորդ օրվանից: Այդ արտահայտվում է նրանով, որ առջևի վերջավորությունները կամաց-կամաց ձգտում են մասնակցել շարժվելու և լողալու պրոցեսներին: Հիշյալ խանգարումը լրիվ վերականգնուման է հասնում վիրահատումից 10—17 օր հետո (նկ. 2):



Նկ. 2

Միզելու և գեֆեկացիայի ինքնուրույն կատարումը նկատվում է վիրահատումից 5—6 օր հետո: Այս սկզբնական շրջանում արտահայտվում է թույլ ձևով, իսկ 6—8 օր հետո լինում է ավելի նորմալ: Այդ պրոցեսների լրիվ վերականգնումը նկատվում է վիրահատումից 10—11 օր հետո: Գորտերի մոտ շնչառական և սրտի աշխատանքի խանգարումների վերականգնումը նկատվում է վիրահատումից 2—3 ժամ հետո:

Դրաման շեմքի փոփոխությունը ողնութեղի երկաղմանի կիսահատումից հետո — Գորտերի մոտ վիրահատումից 2—3 ժամ հետո նկատվում է գրգռման շեմքի անկում, որն առավել ուժեղ ձևով արտահայտվում է ետին և համեմատարար թույլ առջևի վերջավորությունների մոտ (աղյուսակ 1): Վիրահատումից 3—4 օր հետո գրգռման շեմքի անկումը դադարում է, որից հետո այն աստիճանաբար բարձրանում է, այսինքն թուլանում է գրգռականությունը, իսկ 12—17 օր հետո մոտենում է նորմալին: Որոշ գորտերի մոտ այդ երեսով արահայտվում է այլ կերպ, այսպես №№ 25 և 27 գորտերի մոտ վիրահատումից մեկ ժամ հետո առջևի վերջավորությունների մոտ ստացվել է գրգռման շեմքի բարձրացում, իսկ ետևի վերջավորությունների մոտ՝ գրգռման շեմքի իջեցում:

Աղջուռակ 2

Գրգուման շեմքի վոփոխությունը գորտերի մոտ ողնուզեղի երկկողմանի
կիսահամատությունը հետո (թվերը արտահայտված են սմ-ով)

| Կենդանու համարը և սեռը | Ստուգ- ման օրը | Վերջավորություն | | | | Մանոթություն | |
|------------------------------|-------------------|-----------------|------|-------|------|------------------------------|--|
| | | առջեկի | | ետեկի | | | |
| | | աջ | ձախ | աջ | ձախ | | |
| Դորտ 22 | 3/6-54 | 21,8 | 22 | 21 | 21,5 | Հասվեց ողնուզեղը 2 կողմից | |
| | 4/6 | 22,5 | 21,9 | 21,5 | 22 | | |
| | 5/6 | 24,5 | 24 | 26,8 | 24,5 | | |
| | 7/6 | 25 | 24,5 | 27,5 | 28 | | |
| | 8/6 | 24,5 | 23,7 | 25,3 | 26,5 | | |
| | 10/6 | 24 | 23 | 24,5 | 25 | | |
| | 12/6 | 23 | 22,5 | 23 | 23 | | |
| | 14/6 | 22,7 | 22 | 22,4 | 22,7 | | |
| | 15/6 | 23 | 23,3 | 23,2 | 23,7 | | |
| | 16/6 | 22,5 | 22,3 | 22,2 | 23,4 | | |
| | 17/6 | 24 | 27 | 26,5 | 28 | | |

Այդ դորտերի մոտ առջեկի վերջավորությունների գրգուման շեմքի անկումը նկատվել է միայն վիրահատությունը 3—4 օր հետո: Հիշյալ դեպքերում ետին վերջավորությունների գրգուման շեմքը ի համեմատ առջեկի վերջավորությունների, մնում է իջած, այսինքն, նրանց մոտ գրգռականությունը ավելի բարձր է, քան նախքան վիրահատումը:

Վերը բերված ժամանակը դարձյալ խոսում են այն մասին, որ գորտերի մոտ ողնուզեղի երկկողմանի բարձր կիսահատումը առաջ է բերում գրգուման շեմքի անկում, այսինքն գրգռականության բարձրացում: Գրգուման շեմքի խանդարումները գորտերի մոտ վերականգնվում են 10—15 օրվա ընթացքում (տե՛ս աղյուսակ 1):

ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՈՂՆՈՒՂԵՂԻ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ԲԱՐՁՐ ԿԻՍԱՀԱՏՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Սծմբական թիվի լուծույթի աղդեցության նկատմամբ ռեֆլեքսները գրսելու ժամանակի փոփոխության ուսումնասիրությունները ողնուզեղի երկկողմանի կիսահատումներից հետո ցուց են տվել, որ վիրահատությունը 1—2 ժամ անց գորտերի առջեկի վերջավորությունների մոտ նկատվում է գաղտնի շրջանի երկարացում, իսկ ետին վերջավորությունների մոտ ընդհակառակ նրա կարճացում: Սկսած վիրահատութիւն երկրորդ օրվանից գաղտնի շրջանի կարճեցումը նկատվում է ինչպես առջեկի, այնպես էլ ետին վերջավորությունների մոտ, բայց այստեղ ևս այն ավելի ուժեղ արտահայտվում է ետին վերջավորությունների մոտ: Վերը հիշված խանդարումը աստիճանաբար վերականգնվում է սկսած վիրահատման 3—4-րդ օրից, իսկ 13 օր հետո ձգտում է հասնել նախքան վիրահատման շրջանի թվերին:

Աղյուսակ 5

Գողտնի շրջանի որոշումը Տյուրկի մեթոդով ողնուղեղի երկողմանի հիսահառումից
հետո (թվերը արտահայտված են դրկով)

| Հենգանու համարը և անոր | Մոռուց- ման օրը | Վերջագործություններ | | | | Մանութություն | |
|------------------------------|--------------------|---------------------|---------|---------|---------|---------------------------------|--|
| | | առջեի | | հետեի | | | |
| | | աջ | ձախ | աջ | ձախ | | |
| Դորտ 32 էդ | 8/6-54 | 4,4-5 | 5,8-5 | 4,9-4,4 | 4,6-4 | | |
| | 10/6 | 7,2-5 | 5-5 | 5-4 | 8-4 | | |
| | 12/6 | 7-6 | 4-10 | 6-6 | 8,4-6,4 | | |
| | 15/6 | 6,4-8 | 7,6-7,4 | 6,4-6 | 5,4-6,2 | հատկեց ողնուղեղը և կողմեց | |
| | 15/6 | 15-18 | 13-14 | 2-0,1 | 1,4-2 | օպ. 1 ժամ հետո | |
| | 16/6 | 4,2-0,4 | 6-8,8 | 1-0,6 | 1,2-0,4 | | |
| | 19/6 | 2,4-3 | 2-2,6 | 1,4-2,6 | 4,8-32 | | |
| | 22/6 | 3-4 | 4-5 | 9-6 | 4,4-3 | | |
| | 24/6 | 4-5,2 | 5,2-6 | 5-8 | 5,4-6 | | |
| | 30/6 | 5-6,2 | 5-6 | 7-4 | 5-8 | հանգեց միջին ուղեղի ձախ կեսը | |
| | 30/6 | 8-12 | 12-7 | 11-20 | 5-4 | օպ. 2 ժամ հետո | |
| | 1/7 | 3-4 | 2-4 | 7-6 | 4-8 | հանգեց միջին ուղեղի աջ կեսը | |
| | 2/7 | 7-11 | 4-8 | 1,9-7 | 6-6,2 | | |
| | 3/7 | 2-1,4 | 1,4-3 | 0,4-4 | 0,6-3 | սատկեց դրզոված վե- ճակաւմ | |

Այսպես, № 32 գործի ժու նախքան վիրահատումը առջեկի վերջավորությունների համար գաղտնի շրջանի ժամանակը եղել է 7 վրկ., իսկ ետին վերափորաթյունների համար 6-6,5 վրկ. Վիրահատումից մեկ ժամ հետո առջեկի վերջավորությունների համար այն դարձել է 14-16 վրկ. ետին վերջավորությունների համար՝ 1,2-1,7 վրկ. Վիրահատման հաջորդ օրը առջեկի վերջավորությունների համար գաղտնաշրջանը եղել է 4 վրկ., ետին վերջավորությունների համար՝ 0,8-1 վրկ. 15 օր հետո առջեկի վերջավորությունների համար այն եղել է 4-6 վրկ., ետին վերջավորությունների համար՝ 6-6,5 վրկ.:

ԱՌԶԵՎԻ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԾԻՆՔԱՅԻՆ ԵՎ ԵՏԻՆ
ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՄՈՒՆԿԱՅԻՆ ՆԵՐՎԵՐԻ ԽՐԾՆԱՔՍԻԱՅԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՂՆՈՒՂԵՂԻ ԵՐԿԱՊՂՄԱՆԻ ԲԱՐՁՐ
ԿԻՍԱՀԱՏՈՒՄԻՑ ՀԵՏԸ

Առումնասիրությունները ցուց են ավել, որ ողնուղեղի երկողմանի կիսահատումից հետո փոփոխություններ են նկատվում նաև վերջավորությունների ներվերի խրոնաքիայի մեջ: Փոփոխությունները նկատվում են ոչ միայն խրոնաքիայի թվերի, այլև բերազայի թվերի միջև: Վիրահատման 2-3-րդ օրվանից առաջանում է բերազայի անկում և խրոնաքիայի կարճացում:

երոնաբախայի փոփոխությունը զորացրի մոտ ողնուղեղի երկրողմանի կիսահատումից
հետո (թվերը արտահայտված են միկրօֆարագներով)

| կենդա- նու հա- մարք և սեռը | Մառող- ման օրը | Վերջավորություններ | | | | | | | | Մանրիու- թյուն | |
|-------------------------------------|-------------------|--------------------|-----|-----|-----|------|-----|-----|-----|--|--|
| | | առջեկի | | | | ետէի | | | | | |
| | | աջ | ձախ | աջ | ձախ | աջ | ձախ | աջ | ձախ | | |
| 28 արու | 7/10-52 | 6 | 012 | 6 | 012 | 6 | 013 | 6 | 013 | | |
| | 9/10-52 | 6 | 011 | 6 | 012 | 6 | 012 | 6 | 013 | | |
| | 13/10-52 | 6 | 012 | 6 | 012 | 6 | 012 | 6 | 012 | 15/10 կորցեց ողնուղեղի ձախ կեսը և աջ կեսը | |
| | 16/6 | 6 | 006 | 6 | 012 | 5 | 012 | 5 | 010 | | |
| | 17/10 | 5 | 007 | 6 | 008 | 5 | 009 | 5 | 010 | | |
| | 18/10 | 4,5 | 006 | 5 | 003 | 4 | 003 | 4 | 003 | | |
| | 25/10 | 4 | 008 | 5 | 007 | 5 | 001 | 5 | 003 | | |
| | 27/10 | 4,5 | 007 | 4,5 | 006 | 4 | 013 | 4 | 004 | | |
| | 29/10 | 5 | 006 | 5 | 008 | 4 | 005 | 5 | 006 | | |
| | 2/10 | 5 | 008 | 5 | 007 | 5 | 0 6 | 5 | 007 | | |
| | 3/10 | 5,5 | 008 | 5,6 | 008 | 5 | 003 | 5 | 005 | | |
| | 5/10 | 6 | 003 | 5,6 | 007 | 6,5 | 007 | 6,5 | 007 | 5,10 հանգեց առաջնորդն ուղեղը | |
| | 5/10 | 5 | 010 | 6 | 011 | 6 | 013 | 6 | 010 | օպլ. 3 ժ. հետո | |
| | 6/10 | 5 | 007 | 5 | 006 | 5 | 007 | 5 | 005 | շատ թույլ է, օրվա վերջում ստակեց | |

որը 3—6-րդ օրը ավելի ուժեղանում է: Սկսած վիրահատման 7—8-րդ օրից այդ երկութները թուլանում են՝ բնորադրանում է, իսկ խրոնաբասիան երկարում: Այդ փոփոխությունները աստիճանաբար վերականգնվում են և 14—16 օր հետո նրանք ձգտում են հասնելու նախքան վիրահատման շրջանի թվերին (տե՛ս աղյուսակ 6):

Առաջնային և միջին ուժեղի հեռացման ազդեցուրյունը ողնուղեղի երկկողմանի կիսահատման ժամանակ գորտերի մոտ — ինչպես արդեն վերը նշվել է, ողնուղեղը երկկողմանի կիսահատման ենթարկված գորտերի մոտ առաջնային և միջին ուղեղների հեռացումը կատարվել է խանգարված ֆունկցիաների լրիվ վերականգնումից հետո:

Ողնուղեղի երկկողմանի կիսահատում ունեցող գորտերի մոտ խանգարված ֆունկցիաների լրիվ վերականգնումից հետո, առաջնային ուղեղի հեռացումը մեր կողմից դրված փորձերում նշանակալից փոփոխություններ չեն առաջացրել: Նկատվում է միայն գրգռականության որոշ աստիճանի բարձրացում, որը սակայն վիրահատման առաջին կամ երկորդ օրը լրիվ կերպով անհե-

տանում է, այսինքն հավասարվում նախքան առաջնային ուղեղի հեռացման շրջանին:

Չնշին փոփոխություններ են նկատվում նաև գրգռման շեմքի, գաղտնի շրջանի և խրոնաբխայի թվերի մեջ: Այստեղ ես առաջացած թուլ խանգարումները լրիվ կերպով անհետանում են վիրահատման հաջորդ օրը:

Բոլորովին այլ պատկեր է ստացվում միշին ուղեղի հեռացումից: Կատարված բազմաթիվ փորձերը ցուց են տվել, որ ողուղեղի երկկողմանի բարձր կիսահատումից առաջացած խանգարված ֆունկցիայի վերականգնումը հետո, միշին ուղեղի հեռացումը գորտերի մոտ առաջ է բերում խորը խանգարումներ և կոմպենսացված ֆունկցիաները, որոնք առաջացել են ողուղեղի երկկողմանի կիսահատումից հետո, կրկին դեկուպենսացիայի են ենթարկվում:

Միշին ուղեղը հեռացնելուց հետո գորտերը դառնում էին ավելի դյուրագրիփո ու պասսիփ: Նրանք համարյա չէին լողում ու ցատկուում, վիրահատված գորտերի մի մասը առջևի վերջավորությունների մեխանիկական գրգռմանը պատասխանում՝ էին շատ թուլ ձևով: Գորտերի մյուս մասի առջևի և ետքն վերջավորությունների մոտ նկատվում է գերզրդավածություն՝ գորտերի ուղքերից միշիլը մեխանիկական պայման ստանալուց պատասխանում էին մյուս վերջությունները:

Վիրահատված գորտերի մոտ վիրահատման հաջորդ օրը նկատվում է գրգռականության է՛լ ավելի բարձրացում: Այդ գրությամբ կենդանիներն առանց որևէ լավացման նշանների սատկում էին նույն կամ հաջորդ օրը:

Ուժեղ փոփոխություններ են նկատվում նաև գրգռման շեմքի, գաղտնի շրջանի խրոնաբխայի ժամանակի թվերի մեջ: Փորձերը ցուց են տվել, որ միշին ուղեղի հեռացումը գորտերի մոտ առաջ է բերում գրգռականության բարձրացում: Այդպիսի գորտերի մոտ գրգռման շեմքը ուժեղ կերպով իշնում է և այն շարունակվում մինչև կենդանու սատկելը: Գրգռականության ուժեղ բարձրացում նկատվում է նաև Տյուրկի մեթոդով ուղեղեքսների որոշման ժամանակը: Փոփոխություններ են նկատվում նաև վերջավորությունների ներվերի խրոնաբխայի և բերքազայի մեջ, որոնք մնում են անփոփոխ մինչև գորտերի սատկելը:

Այն գորտերի մոտ, որոնց միայն միշին ուղեղն էր հեռացվել, ևս տեղի է ունենում գրգռականության որոշ շափով բարձրացում, բայց դա արտահայտվում էր ընդհանուր ձևով: Այդպիսի գորտերը մեծ մասամբ քայլում են, քիչ են թռչուում և նրանք կարող էին երկար ժամանակ ապրել:

Մի այլ խումբ գորտերի վրա դրված փորձերը ցուց ավեցին, որ եթե ողուղեղի երկկողմանի կիսահատումից անմիջապես հետո, կամ հաջորդ օրը հեռացվում է միշին ուղեղը, կամ թե հակառակը, սկզբում հանվում է միշին ուղեղը, ապա առաջացվում ողուղեղի երկկողմանի կիսահատում, ապա այդպիսի գորտերի մոտ խանգարումները արտահայտվում են ավելի խորը և գորտերը սատկում են գրգռված վիճակում, առանց խանգարված ֆունկցիաների շատ թե քիչ լավացման նշանների:

Նկարագրված երևույթների անալիզը ցուց է տալիս.

1. Ողնուղեղի երկկողմանի կիսահատումը գորտերի մոտ առաջ է բերում մի շարք խանգարումներ, որոնք ժամանակի ընթացքում աստիճանաբար վերականգնվում են:

Վերականգնման երեսլիքները սկսվում են վիրահատման հաջորդ օրվանից և ավարտվում 15—17 օրում:

2. Ողնուղեղը երկկողմանի կիսահատման ենթարկված գորտերի մոտ խանգարված ֆունկցիաների լրիվ վերականգնումից հետո առաջնային ուղեղի հեռացումը էական փոփոխություններ չի առաջացնում և համարյա չի ազդում վերականգնված ֆունկցիաների վրա:

3. Ողնուղեղը երկկողմանի կիսահատման ենթարկված գորտերի մոտ խանգարված ֆունկցիաների լրիվ վերականգնումից հետո, միշին ուղեղի հեռացումը արմատական փոփոխություններ է առաջացնում կենդանու օրգանիզմում, առաջ բերելով վերականգնված ֆունկցիաների լրիվ դեկոմպենսացիա: Գորտերի մոտ միշին ուղեղի հեռացումից հետո խանգարված ֆունկցիաների վերականգնում տեղի չի ունենում և կենդանիները սատկում են:

4. Գորտերի մոտ ողնուղեղի երկկողմանի բարձր կիսահատումից հետո խանգարված ֆունկցիաների վերականգնման պրոցեսում վճռական դերը պատկանում է միշին ուղեղին, առանց որի վերականգնման երեսլիքները տեղի չեն անենում:

5. Միայն միշին ուղեղը հեռացված գորտերի մոտ ընդհանուր գրգռականությունը որոշ շափով բարձրանում է, այդպիսի գորտերը երկար ժամանակ կարող են ապրել:

Փ. Ա. ԱԴԱՄՅԱՆ

ВОССТАНОВЛЕНИЕ НАРУШЕННЫХ ФУНКЦИЙ У ЛЯГУШЕК ПОСЛЕ ДВУХСТОРОННЕЙ ГЕМИСЕКЦИИ СПИННОГО МОЗГА

(Р е з ю м е)

Восстановление нарушенных функций — пластичность — является одним из важных свойств животного мира, почему и изучение этого явления имеет первостепенное значение.

Несмотря на многочисленные исследования по проблеме приспособляемости (пластичности) нервной системы многие вопросы до сего времени остаются не выясненными. В частности нет данных о восстановлении нарушенных функций у низших позвоночных животных после высокой половинной перерезки спинного мозга. Учитывая это, нами по предложению проф. Э. А. Асратяна проведены многочисленные опыты по изучению процесса восстановления нарушенных функций у лягушек после двухсторонней перерезки спинного мозга на высоком уровне.

Детальное изучение последствий двухсторонней перерезки спинного мозга у лягушек на высоком уровне (первая перерезка непосредственно под продолговатым мозгом, вторая на 8—10 мм ниже его) и процесса восстановления нарушенных, после указанной операции, функций показало следующее:

1. Перерезка спинного мозга на высоком уровне у лягушек вызывает

глубокое нарушение двигательной чувствительной и вегетативной функций.

Нарушения двигательных функций выражается тем, что сразу же после операции у лягушек нарушаются функции плавания, прыжка и ходьбы. Передние конечности совершенно бездействуют: на стороне первой перерезки лапа бывает немного ослабленной, а лапа противоположной стороны — напряженной и вытянутой.

Нарушения вегетативных функций выражаются в прекращении произвольного мочеиспускания и дефекации.

В первый период после операции наблюдается также нарушение дыхания. Кроме того отмечается падение порога возбудимости, причем резко на задних конечностях и сравнительно слабо на передних, удлинение скрытого периода рефлексов в передней конечности и наоборот его сокращение в задней. Изменяется также хронаксия и реобаза конечностей.

2. Наблюдавшиеся после половинной перерезки спинного мозга нарушения у лягушек со временем восстанавливаются. Восстановление нарушенных двигательных функций отмечается, начиная со второго-третьего дня после операции и полностью заканчивается в течение 10—17 дней.

Нормализация мочеиспускания и дефекации наблюдается с 5—6 дня и полностью восстанавливается через 10—11 дней после операции.

Отдельные нарушения восстанавливаются, начиная со второго дня и до 10—15 дней после операции.

3. После восстановления нарушенных функций удаление переднего мозга у лягушек не вызывает сколько-нибудь значительных нарушений восстановленных, после двухсторонней перерезки спинного мозга, функций.

4. Удаление среднего мозга, после восстановления нарушенных от двухсторонней перерезки спинного мозга функций, у лягушек вызывает полное нарушение восстановленных функций, полную декомпенсацию. Эти нарушения впоследствии не восстанавливаются и животное погибает.

5. В процессе восстановления нарушенных от двухсторонней перерезки спинного мозга функций у лягушек решающее значение имеет средний мозг. При удалении среднего мозга у лягушек восстановление нарушенных функций не происходит.

